ՆԱԽԱԳԻԾ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___ » _____ 2026թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՀԵՆԱԿԵՏՇԻՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/7 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ «Հենակետշին» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Ծիծեռնակաբերդի խճուղու հ.2/7 հասցեում /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 06042026-01-0194 վկայական/ տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1211.0քմ մակերեսով հողամասը (01-006-0619-0050 կադաստրային ծածկագիր) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեին կից և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1211.0քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՀԵՆԱԿԵՏՇԻՆ» ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/7 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նախագծով առաջարկվում է «Հենակետշին» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեում և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1211.0քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 06042026-01-0194 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեին կից գտնվող և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1211.0քմ մակերեսով հողամասի հետ:

«Հենակետշին» ՓԲ ընկերությունը դիմել էր Երևանի քաղաքապետարան Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/4 հասցեում հասարակական նշանակության շինության կառուցման համար: Քաղաքաշինական փաստաթղթեր տրամադրելու ընթացքում պարզվել է, որ Հենակետշին» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասից 1211.0քմ մակերեսով հատվածը ներառված է ասֆալտապատ ճանապարհի մեջ, որը հանդիսանում է «Փյունիկ» Հայաստանի հաշմանդամություն ունեցող անձանց միություն» բարեգործական հասարակական կազմակերպության շենք-շինությունները սպասարկող ճանապարհը, որի պահպանումը պարտադիր պահանջ է:

Հաշվի առնելով նշվածը և այն հանգամանքը, որ ընկերության կողմից Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/4 հասցեում իրականացվող կառուցապատման արդյունքում արտաքին չափերի և տեղադիրքի պատճառով հնարավոր չէր լինելու պահպանել քննարկվող ճանապարհը, առաջարկվել էր ճանապահի հատվածը առանձնացնել /Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7/ և իրականացնել հողամասերի փոխանակում հարակից հատվածում գտնվող հողամասից՝ այդպիսով պահպանելով հողամասերի արդյունավետությունը:

Մասնագիտական որակավորում ունեցող «ՖՈՒԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից իրականացնել է հողամասերի շուկայական արժեքի գնահատման աշխատանքներ և ըստ տրամադրված հաշվետվությունների՝ Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեում գտնվող «Հենակետշին» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի շուկայական արժեքը 20.05.2026թ դրությամբ կազմել է 273 010 000 ՀՀ դրամ, իսկ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Ծիծեռնակաբերդի

խճուղի հ.2/7 հասցեին կից հատվածում գտնվող հողամասի շուկայական արժեքը 09.06.2026թ դրությամբ կազմել է 259 402 000 ՀՀ դրամ: Ընկերության կողմից ներկայացվել է տարբերություն կազմող մասի նկատմամբ Երևան համայնքին պահանջ չներկայացնելու վերաբերյալ դիմում:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ